

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

(Նիկիտեց)

1

Խ Ե Ղ Ճ ՈՒ Թ Ի Ի Ն

Է՛հ, դու խեղճութիւն, միշտ սովոր լացին,
Տան մէջ համբերող ամեն դառնութեան.
Դու ընտելացած կըտոր սև հացին,
Քաշուող ու վախլուկ օտարի դըռան:

Ամենքի աչքին նայում ես երկչոտ,
Անտէ՛ր ու անճար, ամօթից սպանուած.
Անկիւն ես կանգնում հարուստների մօտ,
Որպէս աչքի փուշ, մերժուած, մոռացուած...

Դու լող ես տալիս—ուր ջուրն է տանում,
Ուր ճամբայ կրտան—այնտեղ ման գալիս.
Արև ես խընդրում—անձրև ըստանում,
Բերանդ են փակում՝ շիտակ խօսելիս...

Գարունդ անկանայ, գարունդ անձաղիկ,
Սիրում ես՝ կարօտ խընդալից սէրին.
Խնդում ես՝ խնդումդ անժամ ու լըսիկ,
Վերջն էլ քաղց ու ցաւ՝ ծերութեան օրին:

Ո՛չ կեանքդ է կեանք, ո՛չ էլ օրըդ՝ օր,
Հալումայ եղած, սրբտում հազար դարդ.
Մահն է վրայ հասնում, թաղում ես դու խոր,
Վայրի ծաղիկն է գերեզմանիդ զարդ...

Բ Ա Մ Բ Ա Ս Ա Ն Ք

Թէկուզ վարես դու սուրբի կեանք,
 Խընդաս ու լաս—ի՛նչ անես,
 Քեզ կը գտնի չար բամբասանք,
 Դուռըդ կըգայ դահճի պէս:

Թէկուզ առնես, դուռըդ կապես,
 Դըռան տակով կը մըտնի.
 Թէկուզ քարէ պարիսպ քաշես,
 Քարումն էլ անցք կը գըտնի:

Մեղք ու յանցանք ունես-չունես,
 Իմնց կըտայ աշխարհին.
 Մի՛սըդ կ'ուտեն՝ քանի սաղ ես,
 Բարեկամն ու թշնամին...

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ
